

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Հայկ Բաբոյանյանի, Մարգարիտ Եսայանի և Կարինե Աճեմյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-463-14.03.2014-ՄԻ-010/0) վերաբերյալ:

Համաձայն «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող կուսակցությունները պարտավոր են յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 25-ից ոչ ուշ, մամուլում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը: Համաձայն նույն օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի՝ այն կուսակցությունները, որոնց ակտիվների արժեքը գերազանցել է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը, պար-

տավոր են իրենց հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ միասին:

Կուսակցությունները հաշվետու տարվա ընթացքում իրենց ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունները լիազոր մարմին են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի N 309-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

Օրենքի նախագծով առաջարկվում է օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին կետում «ակտիվների» բառը փոխարինել «տարեկան շրջանառությունը» բառերով: Այսինքն, ըստ օրենքի նախագծի, այն կուսակցությունները, որոնց տարեկան շրջանառությունը գերազանցել է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը, պարտավոր են հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ միասին: Մինչդեռ ակտիվների տարեկան շրջանառության կամ շրջանառության արժեքի ցուցանիշի կիրառումը հստակ չէ, քանի որ, ինչպես նշված որոշմամբ հաստատված կարգով կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվություններում, այնպես էլ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող որևէ այլ իրավական ակտով «տարեկան շրջանառության» վերաբերյալ հատուկ ցուցանիշ սահմանված չէ:

Տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք խմբագրել օրենքի նախագիծը՝ սահմանելով որ աուդիտ չի անցկացվում այն դեպքում, երբ կուսակցությունը լիազոր մարմին է ներկայացնում հայտարարություն հաշվետու տարում կուսակցության ակտիվների մասով փոփոխությունների բացակայության մասին: Ներկայացված առաջարկությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նշված որոշման պահանջներին, ինչպես նաև Հայաս-

տանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի N 1272-Ն որոշման դրույթներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի պաշտոնակատար Հրայր Թովմայանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2.Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱԿԱԿՈՒՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ
և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

**«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական
պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է, որ կուսակցությունների պարտադիր աուդիտի պահանջը գործի ոչ թե ըստ ակտիվների չափի այլ տարեկան շրջանառու միջոցների սահմանված շեմից բարձր լինելու դեպքում:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում *կուսակցությունների հաշվետվությունների հրապարակման համար անհրաժեշտ աուդիտորական եզրակացությունների օրենսդրական պահանջներին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին»
 ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման
 ազդեցության գնահատման

Ուսումնասիրելով «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ գտնում ենք, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-463-14.03.2014-ՄԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՕՐԵՆՔԸ**

**«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28.1-րդ հոդվածի 1-ին կետում «ակտիվների» բառը փոխարինել «տարեկան շրջանառությունը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Կուսակցությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը պարտադրելով աուդիտ անցկացնել այն կուսակցություններին, ում ակտիվների չափը գերազանցում է սահմանված շեմը, բարդ ֆինանսական վիճակի մեջ է դնում այն կուսակցություններին, որոնք չունեն ֆինանսական միջոցներ աուդիտ անցկացնելու համար, սակայն ունեն համապատասխան շեմից բարձր չափով ակտիվներ: Օրինակ, նման իրավիճակ կարող է առաջանալ եթե կուսակցությունը ունի մեծ արժողությամբ անշարժ գույք, կամ մեծ չափի անհուսալի պարտքեր, որոնք դասվում են ակտիվների շարքին, սակայն իր տարեկան շրջանառությունը չի բավարարում աուդիտ անցկացնելու համար:

Հաշվի առնելով, որ աուդիտի անցկացումը ՀՀ-ում սկսում է 600 հազար դրամից, օրենքի վերոհիշյալ պահանջը արդեն իսկ բարդ վիճակի մեջ է դրել մի շարք կուսակցությունների, որոնք չունեն այդպիսի միջոցներ, ըստ էության դրդելով վերջիններիս դադարեցնել իրենց գործունեությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 28-ը ՀՀ յուրաքանչյուր քաղաքացուն իրավունք է տրամադրում այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելուն: Նույն հոդվածում նշվում է նաեւ, որ կուսակցություններ ստեղծելու իրավունքը կարող է սահմանափակվել որոշ առանձին դեպքերում, որոնց մեջ չի նշված ֆինանսական միջոցների բացակայության պատճառը:

Հետեւաբար առաջարկվում է, որ աուդիտի պահանջը գործի ոչ թե ըստ ակտիվների չափի այլ տարեկան շրջանառու միջոցների սահմանված շեմից բարձր լինելու դեպքում: